

2021-2022 թթ. ձմեռային վարժություններ

Խառն խոնարհում (հ հիմքային բաղադրիչով կամ /հ թույլ բաղադրիչով)

Անցյալ կատարյալ (Aorist)

Բացի **ներգործածն** ու **կրավորածն** խոնարհումներից, կա նաև **խառն խոնարհում** (հ հիմքային բաղադրիչով կամ /հ թույլ բաղադրիչով):

Այսպես խոնարհվում են

- **-աչ-եմ** (ճանաչեմ / ծանեայ),
- **-չ-իմ, -նչ-իմ**
- և **-ն-ում / -չ-իմ** բայերը:

	ճանաչեմ	երկնչիմ	զարթնում
Հիմք / Stem	(pres. ճանաչ , aor. ծանի)	(pres. երկնչ , aor. երկի)	(pres. զարթն , aor. զարթի)
Եգ.	ծանեայ	երկեայ	զարթեայ
	ծանեար	երկեար	զարթեար
	ծանեաւ	երկեաւ	զարթեաւ
Յգ.	ծանեաք	երկեաք	զարթեաք
	ծանեայք, -երուք	երկեայք, -երուք	զարթեայք, -երուք
	ծանեան	երկեան	զարթեան

Ստորադասականի երկրորդ ապառնի (Subjunctive aorist)

	ճանաչեմ	երկնչիմ	զարթնում
Հիմք / Stem	(pres. ճանաչ , aor. ծանի)	(pres. երկնչ , aor. երկի)	(pres. զարթն , aor. զարթի)
Եգ.	ծանեայց	երկեայց	զարթեայց
	ծանիցես	երկիցես	զարթիցես
	ծանիցէ	երկիցէ	զարթիցէ
Յգ.	ծանիցուք	երկիցուք	զարթիցուք
	ծանիջիք	երկիջիք	զարթիջիք
	ծանիցեն	երկիցեն	զարթիցեն

Բայածանցներ (Verbal affixes)

ներկա (present) **-(ա)ն** vs. անց. կատարյալ (aorist) **-եաց / -աց**

Դիմային վերջավորություններ (Personal endings)

ներգործական (active) **-ի** և **այն** vs. կրավորական (mediopassive) **-այ** և **այն**

Մաս Ա

● Գրաբարյան ու պատմալեզվական վարժություններ **երկնչիմ** չեզոք բայով

- 1. «Երանի ամենքին, 'ովքեր' վախենում են Տիրոջից և գնում են նրա ճանապարհները»:
 - ▶ Երանի ամենեցուն ոյք **երկնչի**ն ի Տեառնէ, և գնան ի ճանապարհս նորա:
 - ☐ Սաղմոս ճիԷ.1 (Չօհրապեան 1805, 3. 124):
- 2. «Այսպես կ-**X**-վի [**<** իրան. **ā-frīn-*; II ապառնի] ամենայն [հնդեվր. **m̥r-to-*], որ վախենում է Տիրոջից»:

- ▶ Այսպես օրինեցի ամենայն մարդ որ **երկնչի** ի Տեառնէ:
 - ☐ Սաղմոս ճիԷ.4 (Չօհրապեան 1805, 3. 124):
- 3. «Այս ասացին նրա **X**-ները [հնդեվր. **gēnh₁-tleh₂-*], քանի որ վախենում էին հրեաներից»:
 - ▶ Չայս ասացին **ծնողքն** նորա, զի **երկնչ**էին ի հրեիցն:
 - ☐ Յովհաննէս թ.22 (Չօհրապեան 1805, 4. 205):
- 4. «Մի՛ **X** [հուն. ցեղակից *ἄρυσμα*, I ապամնի] նրանից **Y** [< իրան. *X* < հնդեվր. **h₂meg-s-*] և **Z** [< հուն *τόκος*; -ի ածանցով անեզական], և կվախենա՛ս [I ապամնի] Տիրոջից՝ քո Աստծուց»:
 - ▶ Մի՛ առնուցուս ի նմանէ վաշխ և տոկոսիս. և երկնչիցի՛ս ի Տեառնէ Աստուծոյ քումմէ:
 - ☐ Ղեւտական իե.36 (Չօհրապեան 1805, 1. 246):
- 5. «Մի՛ վախեցիր, (քան)զի լսեց Աստված **X** [հնդեվր. **tjosjo*] **Y** [հնդեվր. **portijo-*] **Z**-ը [հնդեվր. **g^h(u)ṛ-ji-*; «ականջ ղնել + Dat.» իմաստով]»:
 - ▶ Մի՛ **երկնչ**իր, զի լուաւ Աստուած ձայնի որդոյ քոյ:
 - ☐ Ծննդոց իա.17 (Չեյթունյան 1985. 235):
- 6. «Եվ ասում է նրանց. Մի՛ վախեցեք, ես կկերակրեմ [կերակրեմ՛նք, II ապամնի] ձեզ և ձեր տները»:
 - ▶ Եւ ասէ ցնոսա. Մի՛ **երկնչ**իք, ես կերակրեցից զձեզ եւ գտուես ձեր:
 - ☐ Ծննդոց ճ.21 (Չեյթունյան 1985. 393):
- 7. «Եվ կատե՛ս [II ապամնի] նրան. Չգո՛ւշ եղիր, հանդարտվի՛ր [հանդարտեմ չք (հանդարտեցի)] և մի՛ վախեցիր [երկնչիմ]. և (թող) չզարհուրի՛ր [զարհուրիմ չք, II ապամնի, մի մասնիկով] քո անձը»:
 - ▶ Եւ ասացե՛ս ցնա. զգո՛ւշ լեր՝ հանդարտեա՛, և մի՛ **երկնչ**իր. և մի՛ **զարհուրեացի** անձն քո:
 - ☐ Եսայի Է.4 (Չօհրապեան 1805, 3. 337):
- 8. «Եվ վախեցավ Դավիթը Տիրոջից այն **X**-ը [հնդեվր. **H₂m-ōr*, ներգոյական հոլ.]»:
 - ▶ Եւ **երկեաւ**. Դաւիթ ի Տեառնէ յաւուր յայնմիկ:
 - ☐ Բ Թագաւորութեանց գ.9 (Չօհրապեան 1805, 2. 82-83):
- 9. «Եվ **X**-րին [հնդեվր. **prk-ske-*] տեղի **Y**-երը [հնդեվր. **h₂nēṛ*] նրա Ռեբեկա կնոջից [նախդիր (ո՛չ /ի) + բացառական], և ասում է՝ իմ **Z**-ն [ցեղակիցներ՝ հուն. *ἕορ* (Hes.), լատ. *soroŕ*] է. քանզի վախեցավ ասել, թե՛ իմ կինն է»:
 - ▶ Եւ հարցին արք տեղոյն զՌեբեկայ կնոջէ նորա, եւ ասէ. Քոյր իմ է, քանզի **երկեաւ** ասել, թէ կին իմ է:
 - ☐ Ծննդոց իգ.7 (Չեյթունյան 1985. 260):
- ◆ Ենթահարց

Բացատրե՛ք Z-ի նշված ցեղակիցները: Ի՞նչ տեսք կունենար սանսկրիտ ցեղակիցը:

 - ▶ **स्वसर्** *svásar-*
- 10. *հրբել* «լսեցին թշնամիները, թե՛» *գիշերայն* «պատրաստվեցին [պատրաստեմ նք] պատերազմի, վախեցան, զարհուրեցին [զարհուրիմ չք] կտորվեցին [ռնգային միջաձանցով սանսկրիտ ցեղակից՝ *bhanakti* भनक्ति; հայերենում՝ *ե՛խտնարիման* նք] իրենց **X**-երում [հնդեվր. **kērd-*]»:
 - ▶ Իրբել լուան թշնամիքն, եթէ գիշերայն պատրաստեցան ի պատերազմ. **երկեան** զարհուրեցան **բեկան** ի սիրտս իւրեանց:
 - ☐ Ա Մակաբայեցոց ժթ.28 (Ամալյան 1996. 266):
- ◆ Ենթահարց

Ի՞նչ տեսք կունենար X-ի լիտվական ցեղակիցը:

 - ▶ Lith. *širdis* vs. OCS *srъdbce*

- 11. «Ես նրա հետ [ընդ + տրական] բացեիբաց [= բերան ի բերան] եմ խոսելու [խախտիմ հր, II ապամնի], "երեսներով", ոչ թե ամակներով. և տիրոջ X-ը [< պարթևերեն *farr*] տեսավ. և ինչո՞ւ չվախեցաք [եռավանկ ձևը դրեք]՝ վատաբանել [հնդեվր. **bʰeh₂-*; այստեղ մեր բայը հարացուցային կրկնավոր նք է] իմ ծառա Մովսեսին»:

▶ բերան ի բերան խօսեցայց ընդ նմա, երեսօք և ո՛չ ամակօք. և զվիառն Տեռնն ետես. և ընդէ՞ր ոչ **երկերուք** բամբասել զծառայն իմ Մովսես:

☐ Թիւք ժբ (Չօհրապեան 1805, 1. 284):

- 12. «Չեմ վախենա [II ապամնի] ես նրանց բյուր [նախադաս, հոլովված, հոգնակի] զորքից»:

▶ Ոչ **երկեայց** ես ի բիւրուց զօրաց ւոցա:

☐ Սաղմոս գ.7 (Չօհրապեան 1805, 3. 15):

◆ Ենթահարց

Ինչո՞ւ եք դուք պարտավոր իմանալ *բեր/բիւր* բառի հոլովումը:

▶ Վիպասանական պատառիկից.

Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս

հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց

ընդ քաջազգւոյ կոյս օրհորդիս Ալանաց.

☐ Մովսես Խորենացի 2.ծ (1913=1991. 178 տող 18-20):

- 13. «Եվ կտեսնեն բոլոր ազգերը, որ տիրոջ X-ը [հնդեվր. **h₃neh₃-mr̥*] Y-եցյալ [հնդեվր. **gʷot-je-*] Է քո վրա և կվախենան Z-ից [հնդեվր. **tʰe/o-*] [երկուսն Էլ՝ II ապամնի] »:

▶ Եւ տեսցեն ամենայն ազգք երկրի զի անուն տեռնն կոչեցեալ է ի վերայ քո. և **երկիցեն** ի քէն:

☐ Երկրորդ օրէնք իր.10 (Չօհրապեան 1805, 1. 395; Cox 1981. 182):

- 14. «Վախեցի՞ր Աստծուց, որդյա՛կ, և թագավորից»:

▶ **Երկի՛ր** յԱստուծոյ, որդեակ, և ի թագաւորէ:

☐ Առակք իր.21 (Չօհրապեան 1805, 3. 181):

- 15. «Վախեցե՛ք [եռավանկ ձևը դրեք] Տիրոջից, նրա ամենայն բարեպաշտնե՛ր [հնդեվր. **kubʰ-ro-*]:»:

▶ **Երկերուք** ի Տեռննէ, ամենայն սուրբք նորա:

☐ Սաղմոս լգ.10 (Չօհրապեան 1805, 3. 39):

Մաս Բ

● Գրաբարյան ու պատմալեզվական վարժություններ *մարտնչիմ* չեզոք բայով

- 1. «Մենք կովում ենք մեր X-երի [հնդեվր. **h₂(e)ngʷ-*] համար և մեր Y-ների [< իրան. **abi-daina-*] համար»:

▶ Մեք **մարտնչ**իմք վասն անձանց մերոց եւ վասն արիւնաց մերոց:

☐ Ա Մակաբայեցւոց գ.21 (Ամալյան 1996. 115-116):

- 2. «Եվ այնտեղ երևացին դևերը [սեռականով ենթակա] հայ թագավորների մեծ և բուն մեհյաններից՝ պաշտամունքի տեղերում՝ Անահտական մեհյանում», յերեզն աւանի. ուր «դևերը հավաքված [ժ....] մարտնչում էին» ի նմանութիւն վահանաւոր զօրու, և մեծագոյ բարբառով «հնչեցնում էին [հնչեմ չք] լեռները»:

▶ Եւ անդ երևեալ դիւացն ի մեծ և ի բուն մեհենացն Հայոց թագաւորացն, ի տեղիս պաշտամանցն, **յԱնահտական** մեհենիւն, **յԵրեզն** աւանի. ուր ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն **մարտնչ**էին, և մեծագոյ բարբառով զլերիւս հնչեցուցանէին:

☐ Ազաթանգեղոս § 786 (1909=1980. 409):

- 3. «Գերարացիների հովիվները կռվում էին Իսահակի հովիվների հետ [ընդ + Acc. նկատենք, որ ընդ-ը միասնության գաղափար կարող է արտահայտել ինչպես D-ով, այնպես էլ, հատկապես հոգնակիում, Acc-ով] և ասում էին, թե ջրհորն իրենցն է [I ապառնի]»:

▶ Եւ մարտնչէին հովիւքն Գերարացւոց ընդ հովիւսն Իսահակայ եւ ասէին, եթէ Իւրեանց իցէ ջրհորն:

□□ Ծննդոց իգ.20 (2Եյթունյան 1985. 262):

◆ Ենթահարց

Ճագումնաբանական կապ ունե՞ն իրար հետ **հովիւ** և **պաս** բառերը:

- ▶ Հնդեվրոպական ***h₃eyi-peh₂-**՝ոչխարապահ, ոչխար արածեցնող՝
> հայ. ***howiwa-** > **հովիւ**, թեք. հոլովահիմք **հովու-ա-**
• հմմտ. սանսկրիտ **avi-pāśá-**՝հովիվ՝

◇ Հնդեվրոպական ***h₃eyi-**՝ոչխար՝

- սանսկրիտ **ávi-**,
- սեպագիր լուվերեն **hāyi-**,
- հունարեն **ὄϊς**,
- լատ. **ovis**,
- ռուս. **ов-ца** և այլն, բոլորն էլ նշանակում են 'ոչխար':

◇ Հնդեվրոպական ***peh₂-**՝արածեցնել, պահել՝

- իւեթ. **paḥš-**՝պաշտպանել՝,
- լատ **pāscō**՝արածեցնել՝,
- հին եկեղեցական սլավ. **pasti**՝արածեցնել՝, ռուս. **пастн** և այլն:

- ◇ ***pā-tra-** > իրանական ***pāθra-** > **pāhr-** > հայ. **պարհ-** / **պահ-**
պահ-ք, հայց. **պահ-ս** > բրբռ. **պա(հ)ս**

- 4. **X** [հնդեվր. ***kju-to-**] «արեց» վաղվաղակի ի կողման Աստիոքայ, եւ **Y** [ցեղակից՝ սանս. **अविदत्** *ávidat*] գՓիլիպպոս տիրեալ քաղաքին, «կռվեց նրա հետ [ընդ + D] և գրավեց [ա-ով է սկսվում] քաղաքը բռնությամբ»:

▶ Չու արար վաղվաղակի ի կողմանս Աստիոքայ, եւ եգիտ նա գՓիլիպպոս տիրեալ քաղաքին, **մարտեալ** ընդ նմա եւ առ գքաղաքն բռնութեամբ:

□□ Ա Մակաբայեցւոց գ.63 (Ամալյան 1996. 173-174):

◆ Ենթահարց 1

Ճագումնաբանական կապ ունե՞ն իրար հետ **X** և **արշալ** բառերը:

- ▶ Հայ. **չու, չոգ-** vs. ***շալ** < իրան. ***šyav-**

◆ Ենթահարց 2

X-ի ուրիշ ձայնդարձից ի՞նչ բայածն ենք ժառանգել:

- ▶ ***kjo-** > **չոգայ**

- 5. «**X**-եց [հնդեվր. ***kju-** գրոյական ձայնդարձից, ոչ թե ***kjo-**ից] այնտեղից [անդ մակբայից] և փորեց այլ ջրհոր, և չէին կռվում դրա պատճառով [վասն + այն (սեռ.)]. և **Y**-եց [հնդեվր. ***g^oot-je-**] նրա **Z**-ը [հնդեվր. ***h₃neh₃-mŋ**]՝Անդորրություն՝. ասում է, որ "Այժմ ընդարձակեց մեզ տերը և **X**₁-եցրեց [հնդեվր. ***h₂(e)u(e)g-je-**] մեզ երկրում"»:

▶ Չուեաց անտի եւ փորեաց այլ ջրհոր, եւ ոչ **մարտնչէին** վասն այնր. եւ կոչեաց զանուն նորա Անդորրութիւն, ասէ, զի այժմ ընդարձակեաց մեզ տեր եւ աճեցոյց զմեզ յերկրի:

□□ Ծննդոց իգ.22 (2Եյթունյան 1985. 262):

- 6. Հապա «հավաքվեցին [ժողովեմ նք], ուխտ **X**-եցին [հնդեվր. ***d^heh₁-**], խորհուրդ խորհեցին [խորհիմ հք] միմյանց հետ», եւ ասեն. Ամենայն մարդ որ «կգա [II ապառնի]» ի վերայ մեր ի [հնդեվր. ***m^r-d-**] պատերազմի յաւուրս շաբաթու, համարձակ «մարտնչենք [II ապառնի]» եւ մի առ հասարակ ամենեքին «սատկենք [II ապառնի]», որպես եւ «մեր **Z**-ները [հնդեվր. ***b^hreh₂tr-es**]» որ ապրեալ էին «անապատում» անդ:

▶ Հապա ժողովեցան, ուխտ եղին, խորհուրդ խորհեցան ընդ միմեանս եւ ասեն. Ամենայն մարդ որ եկեսցէ ի վերայ մեր ի մարտ պատերազմի յաւուրս շաբաթու, համարձակ **մարտիցուք** եւ մի առ հասարակ ամենեքին սատակեսցուք, որպէս եւ եղբարքն մեր որ ապրեալ էին յանապատի անդ:

☐ Ա Մակաբայեցւոց ք.41 (Ամալյան 1996. 104):

• 7. «Ապա եթէ հասնի ափը [հնդեվր. **medosjo*] և ճակատման պատրաստվի [ճակատիմ չք], հայտնի դարձրեց [յայտ առնեմ], թէ վախեցամ [զանգիտեմ չք], մենք կանցնենք, կկռվենք և կհաղթենք նրան [ոչ նախդիր կա, ոչ էլ ուղիղ խնդիր է] [ստորադասականով բոլոր բայերը՝ II ապառնի]»:

▶ Ապա թէ հասցէ յափն գետոյն եւ ճակատեսցի, յայտ արար, թէ զանգիտեաց, մեք անցցուք **մարտիցուք** եւ յաղթեսցուք նմա:

☐ Ա Մակաբայեցւոց Ե.41 (Ամալյան 1996. 150):

• 8. Իբրեւ «տեսան» զգունդն, զի «գալիս էր» ճակատեալ ընդդէմ լոցա, «սկսեցին [սկսանիմ հք] խոսել [խաւսիմ հք]», որ ընդ Յուդային էին, եւ ասեն. Չիա՞րդ «կկարողանանք [II ապառնի]» մեք սակաւա**X** [հնդեվր. **gʰes-r-m*] «կռվել» ընդ այնչափ պնդակազմ գնդի, մանաւանդ զի լքեալք եւ լուծեալք. զի այս**Y** [հնդեվր. **H(e)h2m-ōr*] քանի է, զի **Z** [ցեղակից՝ հուն. *νήπιος* (< *νήφω* բայից)] եմք:

▶ Իբրեւ տեսին զգունդն, զի գայր ճակատեալ ընդդէմ լոցա, սկսան խօսել, որ ընդ Յուդային էին, եւ ասեն. Չիա՞րդ կարասցուք մեք սակաւաձեռն **մարտնչել** ընդ այնչափ պնդակազմ գնդի, մանաւանդ զի լքեալք եւ լուծեալք. զի այսաւր քանի է, զի նաւթի եմք:

☐ Ա Մակաբայեցւոց գ.17 (Ամալյան 1996. 115):

◆ Ենթահարց

Վերականգնե՛ք Z-ի հնդեվրոպական նախաձևը:

▶ Հնդեվր. **n-Hg^{wh}-ti-*

• 9. «Կռվի՛ր մեր պատերազմը, և ամենը, ինչ որ ասես [I ապառնի], (այդ ամենում) հնազանդ կլինենք [II ապառնի] քեզ»:

▶ Մարտի՛ր զպատերազմ մեր և զամենայն, որ ինչ ասիցես, հնազանդ լիցուք քեզ:

☐ Ա Մակաբայեցւոց ժգ.9 (Ամալյան 1996. 276):

• 10. «Բայց արդ **X**-ացա [ցեղակից՝ սանս. *जरास jarás-*], եւ դուք հերիք էք **Y**-ու [ցեղակից՝ սանս. *समा sámā-*] իմ փոխանակ իմ եւ «իմ **Z** [հնդեվր. **bʰreh2tr-os-*]: Արդ ելե՛ք կռվե՛ք [եռավանկ] մեր ազգի վրա»:

▶ Բայց արդ ծերացայ, եւ դուք հերիք էք յամս իմ փոխանակ իմ եւ եղբոր իմոյ. արդ ելե՛ք մարտերո՛ւք ի վերայ ազգիդ մերոյ:

☐ Ա Մակաբայեցւոց ժգ.3 (Ամալյան 1996. 314):

◆ Ենթահարց 1

Վերականգնե՛ք X-ի հնդեվրոպական նախաձևը:

▶ Հնդեվրոպական **gʰerH-o-* > հայ. *ծեր, n* հոլ.

◆ Ենթահարց 2

Ի՞նչ տեսք կունենա իրանական ժառանգ արմատը:

▶ **zar-*

Մաս 4

● Հոլովիչների ծագումը

• 1. Ո՞ր հոլովն է հունարեն *πάτερα* ձևը: Վերականգնե՛ք:

▶ Հնդեվրոպական եզակի հայցական **ph2tér-m*

- 2. Ո՞ր հոլովն է հունարեն *πατήρ* (հոգն. *πατέρες*) բառի *πατέρας* ձևը: Վերականգնե՛ք: Տվե՛ք հայկական ստույգ համապատասխանն ու մեկնաբանե՛ք:
 - ▶ Հնդեվրոպական հոգնակի հայցական **ph₂tér-ns* > հայ. *հար-ս*
- 3. Ո՞ր հոլովն է սանսկրիտ *स्वप्नस्य* *svápnasya* ձևը: Վերականգնե՛ք նախածևը և տվե՛ք հայկական ստույգ համապատասխանը:
 - ▶ Հնդեվրոպական եզակի սեռական **suoṃnosjō* > հայ. **քուևո՛յո* > *քևոյ*
- 4. Հայկական ո՞ր հոլովակերտն է հոմերոսյան հունարեն *-φι* ձևի ցեղակիցը: Վերականգնե՛ք:
 - ▶ Հնդեվրոպական **-bʰi* > հայ. *-C/Rբ / -VԼ(ով)*
- 5. Հունարենում տեղի մակբայներ կերտող *-οθι* վերջավորությունը հայերեն ո՞ր ձևույթին է ծագումով նույնական:
 - ▶ Հնդեվրոպական **-o-dʰi-V-*
- 6. Որ հոլովն է հունարեն *πάτερ* ձևը:
 - ▶ Կոչական
- 7. Որ հոլովն է հնդեվրոպական **syesr-ós* ձևը և ո՞րն է դրա հայկական ստույգ ժառանգը:
 - ▶ Հնդեվրոպական **syesōr`քուլյո՛* > հայ. *քոյո* բառի սեռականը, որից ունենք *քեռ*

Հրաչ Մարտիրոսյան
20.04.2022 Լեյդեն